ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 27 – Ա 30 հունվարի 2018 թ.

«ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ»-ի 7-րդ կետը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2018 թվականի հունվարի 31-ին, ժամը 15^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Նիկոյան Արտաշես (մարզպետի տեղակալ), Պողոսյան Անուշ (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Մուշեղյան Յուրա (մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ), Մանուկյան Արմեն (մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ) Խաչատրյան Վիգեն (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ), Ղազարյան Նորիկ (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ);

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Արտաշես Նիկոյանին, քարտուղար՝ Յուրա Մուշեղյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ